Գևորգ Մկրտչյան

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ–ԵԿԵՂԵՑԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Բանալի բառեր – Պետություն, խորհրդային Հայաստան, կրոն, կաթողիկոս, ժողովուրդ, եկեղեցի, հոգևորական, հայրենիք, կենտկոմ:

Հայաստանի խորհրդայնացումը նոր փորձությունների ու դժվարությունների առաջ կանգնեցրեց Հայ առաքելական եկեղեցուն: Պետություն-եկեղեցի հարաբերություններում տեղի ունեցան որակական փոփոխություններ, աթեիստական գաղափարախոսության պաշտոնականացմամբ եկեղեցու հակառակորդներն սկսեցին ավելի սուր պայքար մղել Հայ եկեղեցու դեմ:

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո Խորհրդային Հայաստանի առաջին Սահմանադրությունը[1] հռչակել էր եկեղեցու անջատումը պետությունից, ինչպես նաև՝ դպրոցի անջատումը եկեղեցուց: ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր 1943 թ. ձևավորված Հայ եկեղեցու գործերի խորհուրդը, որը կրոնի նկատմամբ պետական քաղաքականությունն իրականացնող թերևս միակ մարմինն էր, հսկում էր կրոնական պաշտամունքների վերաբերյալ օրենսդրության կիրառումը[2], իրականացնում պետական և կրոնական կազմակերպությունների միջև կապը և այլն:

Այս առումով բավականին հետաքրքրական է Խորհրդային Հայաստանի և Հայ առաքելական եկեղեցու հարաբերությունների զարգացման ուսումնասիրությունը, քանի որ խորհրդային իշխանությունների վերաբերմունքը եկեղեցու հանդեպ ունեցել է աստիճանական զարգացում՝ որոշակի ելևէջներով և փոփոխություններով: Այս առումով պետք է հատուկ ընդգծենք, որ մեր ուսումնասիրության մեջ հիմնականում անդրադարձել ենք Խորհրդային Հայաստանի և Հայ առաքելական եկեղեցու հարաբերությունների սկզբնական շրջանին, որովհետև ոլորտը կարգավորող օրենսդրությունը և իրավական ակտերը ընդունվել են հիմնականում այս ժամանակաշրջանում և հետագայում փոփոխությունների գրեթե չեն ենթարկվել:

Խորհրդային կարգերի հաստատումը զուգորդվեց «հակահեղափոխական տարրերի» դեմ համակարգված պայքարով: Այդ առումով առաջնային թիրախ դարձավ Հայ

---

[1] Խորհրդային կարգերի օրոք Հայաստանում ընդունվել է երեք սահմանադրություն՝ 1924 թ., 1937 թ. և 1978 թ.: Հայաստանի երկրորդ հանրապետության պետական իշխանության բարձրագույն մարմինը, սկսած 1938 թ., ՀՍՍՀ Գերագույն խորհուրդն էր, իսկ մինչ այդ՝ Խորհուրդների համագումարը: ՀՍՍՀ Գերագույն խորհրդի իրավասությունները սահմանվում էին Հայկական ՍՍՀ սահմանադրությամբ: ՀՍՍՀ Գերագույն խորհուրդը իրավազոր էր լուծելու ՍՍՀՄ սահմանադրությամբ և ՀՍՍՀ սահմանադրությամբ ՀՍՍՀ տնօրինությանը վերապահված բոլոր հարցերը:
http://www.parliament.am/parliament.php?id=parliament

[2] Տե՛ս http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=2462

առաքելական եկեղեցին: Հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ նոր իշխանությունները չէի մոռացել. «1920 թ. մայիսյան բոլշևիկյան չարաբաստիկ ապստամբության ժամանակ Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ն անտարբեր չմնաց Թուրքիայի ձեռքով բզկտված և արյունաքամ եղող անկախ Հայաստանի ճակատագրի հանդեպ և, պաշտպանելով սահմանադրական հանրապետության կառավարությանը, վճռականորեն կոչ արեց հայ ժողովրդին՝ ընդդեմ Հայրենիքի նորահայտ «փրկարարների»: Կաթողիկոսը կոչ է անում. «Մենք, որ ապրել և ապրում ենք Հայրենիքի միության և ազատության հույսով, հայ կյանքի վերածնունդի գարնան արշալույսի առկայծման օրերին, վշտով տեսնում ենք, թե ինչպես մոռացել ենք մի ընդհանուր լեզուն և նպատակը, հայ կյանքի շարժող արյունի տակ տեսնում ենք, թե ինչպես անհայտ, անորոշ, մշուշապատ գաղափարներով տարված մարդիկ փոսեր են փորում միացյալ և անկախ հայրենիքին ծանր վտանգներ սպառնացող անկախ օրերում, փոխանակ մի ընդհանուր գործի շուրջը համախմբվելու, մարդիկ անհատական և խմբական ջլատիչ գործողությունների են դիմում, հայրենի նավը անխարդախ նավահանգիստ հասցնելու ծանր աշխատանքների այս դառն օրերում...»[1]:

Հայաստանի խորհրդայնացումից հետո Հայոց եկեղեցու հազարամյակների ընթացքում ստեղծած արժեքները մի հարվածով մոռացվեցին: Խորհրդային իշխանությունը սկսեց վերահսկել հսկա կայսրության բոլոր ազգերին ու եկեղեցիներին: Իշխանությունները, հաշվի չառնելով հայոց ազգային եկեղեցու պատմական դերն ու նշանակությունը, փաստացիորեն հարձակվեցին եկեղեցու և վանքերի հարստության վրա, բռնագրավեցին անշարժ գույքը: Վիճակը սրվեց և հասավ մինչև նրան, որ եկեղեցին պետք է հրաժարվեր Մեծ եղեռնի զոհերի հիշատակը ապրիլի 24-ին նշելուց[2]:

1924 թ. հոկտեմբերի 13-ին ՀԿԿ Կենտկոմի նախագահությունը որոշում ընդունեց հոգևորականության քայքայման մասին: Ըստ այդ որոշման՝ պետք է իրականացվեին հետևյալ քայլերը. «ա. Գտնել, որ հոգևորականության քայքայման նպատակով կամպանիան պետք է շրջվի դեպի «նոր եկեղեցու»[3] կողմնակիցների կազմակերպած միավորման սկզբնական խմբերը, բ. նոր եկեղեցու կողմնակիցների սկզբնական խմբերի կազմակերպման առթիվ անհրաժեշտ համարել նոր եկեղեցու ծրագրի ձևավորումը, գ. հոգևորականության քայքայման նպատակով տեղական կազմակերպությունների ներգրավումն անցկացնել գաղտնի՝ խիստ սահմանափակելով այդ նպատակով ներգրավված ընկերների շրջանակները»[4]: Սա հնարավորություն կտար աշզատվել Հայոց եկեղեցուց: Սակայն վերջնական նպատակին հասնելու համար պետք էր նաև մի վերջին օրենք, որը ՀԽՍՀ կենտգործկոմը և ժողկոմխորհը միացյալ նիստում ընդունեցին 1925 թ. հունվարի 19-ին: Դա կրոնական համայնքների մասին օրենքն էր, որի մեջ մասնավորապես նշվում էր. «Պաշտամունքի շենքերի փակման հիմք են ծառայում, ա. կրոնական ընկերության լիկվիդացիան, բ. հավատացյալների

[1] Տե՛ս Ս. Ստեփանյանց, Հայ Առաքելական Եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, Երևան, 1994, էջ 4:

[2] Տե՛ս Արամ սրկ. Մալխասյան, «Էջեր Խորհրդային կարգերի օրոք Հայ Եկեղեցու և Պետության փոխհարաբերությունների պատմությունից» (ավարտաճառ, անտիպ), Սուրբ Էջմիածին, 2000, էջ 10:

[3] Կոմունիստները կաշառելով կամ սպառնալով որոշ թուլամորթ հոգևորականների՝ նրանց իրենց կողմն էին քաշել և ուզում էին, որ նրանք ներսից քայքայեին Եկեղեցին և ստեղծեին նոր եկեղեցի: Այս նոր ստեղծված եկեղեցին միանգամայն հեշտությամբ հնարավոր կլիներ լիկվիդացնել:

[4] Հայաստանի Հանրապետության հասարակական և քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվ, ֆ.1, ց.4, գ.10, թ.4:

ընկերությունների հակահեղափոխական քայլերի մասնակցելը, գ. պաշտամունքի գույքի վերաբերմամբ տեղի ունեցած զեղծումը կամ այդ գույքի վատնումը, դ.տվյալ վայրի պաշտամունքի շենքը պաշտամունքի համար անընդհատ երկու տարի չօգտագործելը, ե. աշխատավոր մասսաների բազմաստորագիր հավաքական դիմումների, որոշումների և այլ ձևով պաշտամունքի շենքերի փակումը պահանջելու և տվյալ տարածքում բնակություն, բժշկա-սանիտարական և կուլտուր-կրթական նպատակների համար շենքի սուր կարիք զգացվելը»[1]: Արդյունքում բռնագրավվեցին Գևորգյան ճեմարանի շենքը, Մայր Աթոռի մատենադարանը, տպարանը, թանգարանը, միաբանական շենքը, էլեկտրական կայանը, շտեմարանը, սեղանատունը, փուռը, Սինոդի շենքը, հյուրանոցը, Ս. Հռիփսիմեի վանքը, Զվարթնոցը, նոր վեհարանը, Ս. Էջմիածնին ենթակա բոլոր այգիները[2]:

Փաստորեն արդեն «1920-1921 թթ. սկսվել էր բռնությունների ու բռնագրավումների շղթան, որի զոհը դարձան Մայր Աթոռ Սբ. Էջմիածինը և նրա հաստատությունները, որոնք կարճ ժամանակամիջոցում իրար հետևից սկսեցին փակվել կամ յուրացվել պետության կողմից: 1920 թ. դեպտեմբերի 7-ին Վաղարշապատի հեղկոմի ներկայացուցիչ Կորյուն Գրիգորեանը կնքում է տպարանի թղթատան պահեստը և գրասենյակի բոլոր պահեստները: Երկու օրից հետո բռնագրավում են գրաշարանոցը, կազմատունը և կնքում գրապահեստը[3]»:

«Դեկտեմբերի 17-ին հրատարակված դեկրետով խորհրդային կառավարությունը որոշում է ընդունում, ըստ որի հոգևոր հաստատություններին պատկանող մշակութակրթական հիմնարկությունները (դպրոցները, հնագիտական և ազգագրական թանգարանները, մատենադարաններն ու տպարանները) իրենց ամբողջ շարժական և անշարժ գույքով համարվում են պետության սեփականություն և փոխանցվում են Լուսավորության Ժողովրդական Կոմիսարիատի տնօրինությանը[4]: Արդեն 1920 թ. դեկտեմբերի 19-ի որոշումով, առանց հաշվի առնելու եկեղեցու խնդրանքը, Գևորգյան ճեմարանը վերցվում է Մայր Աթոռից. «ճեմարանը կարճ ժամանակամիջոցում դատարկել և հանձնել կառավարությանը»[5]: Առանց ցուցակագրելու բռնագրավում են ճեմարանն իր հարակից շենքերով՝ հեռացնելով ճեմարանի շենքում ապրող տեսուչին[6]: Հետագայում, 1920-1930 թթ. ընթացքում, Հայ եկեղեցու կողմից բազմաթիվ խնդրագիր նամակներ են հղվել խորհրդային իշխանություններին՝ աստվածաբանական դպրոց ունենալու և ճեմարանը վերաբացելու մասին[7], ինչը, սակայն, ոչ միայն

---

[1] Հայաստանի Հանրապետության նորագույն պատմության պետական կենտրոնական արխիվ, ֆ.113, ց. 5, գ.107, թ.36

[2] Տե՛ս Զաւեն աւ. քինյ. Արզումանեան, Ազգապատում, Նիւ Յորք, 1997, էջ 1:

[3] Տե՛ս Վավերագրեր Հայ Եկեղեցու Պատմության, գիրք Բ, Խորեն Ա. Մուրադբեկյան Կաթողիկոս Ամենայն Հայոց (հոգևոր գործունեությունը 1901-1938 թթ.), կազմեց՝ Սադրո Բեհբության, Երևան, 1996, էջ 146:

[4] «Կոմունիստ», 18 դեկտեմբեր, 1920 թ.:

[5] ՀԱԱ, ֆ. 57, ց. 3 գ. 190, թ. 1:

[6] Տե՛ս Վավերագրեր Հայ Եկեղեցու Պատմության, գիրք Բ, Խորեն Ա Մուրադբեկյան Կաթողիկոս Ամենայն Հայոց (հոգևոր գործունեությունը 1901-1938 թթ.), կազմեց՝ Սադրո Բեհբության, Երևան 1996, էջ 146:

[7] Ճեմարանի վերաբացմանն ուղղված եկեղեցու ճիգերը խոչընդոտելու պատճառաբանություններից է հետևյալը. «Ներքին գործոց ժողովրդական կոմիսարի տեղակալը Ամենայն Հայոց Կաթողիկոսի լիազոր ներկայացուցիչ Խորեն Արքեպիսկոպոսին 1926 թ. սեպտեմբերի 8-ի գրությամբ հայտնում էր, որ Կաթողիկոսը 1925 թ. հոկտեմբերի 27-ից հ. 663 գրությամբ ներկայացրած է եղել ճեմարանի ծրագիրն ու կանոնադրությունը՝ ի հաստատումն ժողկոմխորհի: Նա հայտնում է, որ թույլատրում են

տարբեր պատճառաբանություններով չի իրագործվում, այլ ավելին, յուրացվում է ճեմարանի գույքը և հանձնվում լուսժողբաժնին[1]»:

Բավականին խոսուն է ժամանակի քարոզչամեքենա մամուլի վերաբերմունքը եկեղեցու հանդեպ. «Կապիտալիզմի մնացորդների վերացումը մարդկանց գիտակցությունից անհրաժեշտ պահանջ է և պարտականություն խորհրդային երկրի ամեն մի ազնիվ քաղաքացու համար: Այդ վնասաբեր մնացորդների շարքում առաջին տեղերից մեկն են գրավում կրոնական հավատալիքները, որոնք դեռ մնացել են որոշ տարրերի գիտակցության մեջ: Այդ խավարամտության հետևանքով վերոհիշյալ տարրերը հեշտությամբ գործիք են դառնում մեր ներքին և արտաքին թշնամիների համար: Այդ վտանգի դեմ պայքարող յուրաքանչյուր ազնիվ քաղաքացու պետք է հայտնի լինի ընկեր Լենինի նախազգուշացումը՝ «Բոլոր և ամեն տեսակի ճնշող դասակարգերն իրենց տիրապետությունը պաշտպանելու համար սոցիալական ֆունկցիայի կարիք են զգում, դահճի ֆունկցիայի և տերտերի ֆունկցիայի»[2]:

«Անհրաժեշտ է արթուն հսկել «փարաջավոր ժանդարմների» վրա, «տերտերական ֆունկցիայի» վրա, նրանց սնուցող որջերի վրա, անհրաժեշտ է մերկացնել նրանց գաղտնածածուկ գարշ արարքները և խափանել նրանց նենգավոր ոտնձգությունները»[3]:

Այսպիսի քարոզչություն էր տարվում պետական մակարդակով, որն ազդում էր մարդկանց գիտակցության վրա և որի բացասական հետևանքները զգացվում են մինչև մեր օրերը:

Բոլշևիկյան հալածանքները հասնում էին նաև եկեղեցու սպասավորներին: Եկեղեցական գույքի բռնագրավումները ուղեկցվում էին հոգևորականների նկատմամբ գործադրված բռնություններով ու ձերբակալություններով: «Սոբիսեդնիկ» թերթի 1990 թ. 16-րդ համարում հրատարակված մի հոդվածից պարզ է դառնում կոմունիստական կուսակցության եկեղեցու և հոգևորականության դեմ գործադրվելիք բռնությունների ձևի մասին: Ըստ որի, նույն թվականի մարտի 19-ին Լենինը ՌԿ(բ)Կ-ի Կենտկոմի քաղբյուրոյի անդամներին խիստ գաղտնի մի նամակ է ուղարկում, որում ասվում է. «…Մենք պետք է հատկապես այժմ, անողոք և վճռական մենամարտի ելնենք անհարյուրակային հոգևորականության դեմ և ճնշենք նրա դիմադրությունը

«բանալ հոգևոր դպրոց՝ ծրագրից դուրս հանելով հետևյալ առարկանները. ընդհանուր պատմություն, հայոց պատմություն, փիլիսոփայության պատմություն, հոգեբանություն, խորհրդային իրավունք, քաղաքատեսություն և սոցիոլոգիա»: Ընդ որում՝ իշխանության ներկայացուցիչը զգուշացնում էր, որ «դպրոցը չի կարող ճեմարան կոչվել» (Այս մասին առավել մանրամասը տե՛ս Բեհբուդյան Սանդրո, ճեմարանի վերաբացման փորձերը 1918-1930 թվականներին, Երևան, 2004, էջ 22): Հմմտ. տե՛ս նաև՝ ՀԱԱ, ֆ.57, ց. 3, գ. 297, թ. 14-16:

[1] ՀԱԱ, ֆ. 57, ց.3,գ 305, թ. 3:

[2] Ի՞նչ է տերտերի ֆունկցիան.

Սնահավատություններն ամրացնել հավատացյալների գիտակցության մեջ, խաբեությամբ ծեսեր վաճառել նրանց, չեղած «սրբերի» շինծու հրաշքների առասպելներով շշմեցնել հավատացյալներին, ցնորական դրախտի հրապույրով խաբել և դժոխքով սարսափեցնել ու իրենց ազդեցության տակ պահել մարդկանց, պայքարել լուսավորության, գիտության դեմ և ...ընդհատակյա լրտեսությամբ ու ոճիրներով պայքարել հօգուտ իր դասի շահերի և ի վնաս ժողովրդի:

«1921թ. Ուկրանիայում եկեղեցու ղեկավարած ապստամբական շարժման մեջ մեղադրվում էին 557 տերտեր, «որոնցից 46 ցարական և 22 դենիկինյան սպա, 17 ժանդարմ, 214 պետլյուրական բանդիտ և այլն»:

Հայոց եկեղեցին Ուկրանիայի եկեղեցուն հավասարվում էր իր «քաջարի հոգևորականներով. բանդիտ վարդապետներով, ոճրագործ, լրտես տերտերներով, թունավորող վեղարավոր եպիսկոպոսներով....»:

[3] «Պրոլետար», օրաթերթ, Թիֆլիս 11 հունիսի, 1938 թ., հ. 132, էջ 2:

այնպիսի դաժանությամբ, որպեսզի նա մի քանի տասնամյակների ընթացքում չմոռանա այդ»[1]: Նույն փաստաթղթում կենտգործկոմի անդամների առջև դրվում է հետևյալ խնդիրը. «…որքան շատ մեզ հաջողվի գնդակահարել հետադիմական բուրժուազիայի և հետադիմական հոգևորականության ներկայացուցիչների, այնքան լավ: Հարկավոր է հատկապես այժմ դաս տալ այդ ժողովրդին, որպեսզի մի քանի տասնյակ տարիներ նրանք չհանդգնեն մտածել անգամ որևէ դիմադրության մասին»[2]:

«Փաստորեն, Խորհրդային Միությունն ստեղծեց այնպիսի պայմաններ, որ հեշտությամբ կարող էր վերացվել Հայոց եկեղեցին: Այս քաղաքականությունը շարունակվեց մի քանի տասնամյակ՝ անընդհատ իրականացնելով ոտնձգություններ ու բռնություններ: Հայտնի է Լ. Բերիայի և Մուղդուսու գաղտնի զեկույցը Հայոց եկեղեցու պատմության, նրա դերի մասին: Այս զեկույցում Բերիայի կողմից առաջադրված են միջոցներ, որոնց շնորհիվ հնարավոր կլիներ, Հայոց եկեղեցու ղեկը վերցնել կոմունիստների ձեռքը»[3]:

Եկեղեցու հանդեպ վարած մերժողական քաղաքականության դրսևորում էր նաև 1926 թ. ՀԿԿ կենտկոմի նախագահության «Հայաստանի պետական քաղաքական վարչության իրավունքների, վարչական արտաքսման, համակենտրոնացման ճամբարների մասին» որոշումը, որով սկիզբ առան հայ հոգևորականների արտաքսման ու ոչնչացման գործողությունները: 10-15 տարիների ընթացքում բազում հայ հոգևորականներ կա՛մ սպանվեցին, կա՛մ արտաքսվեցին Սիբիր: Ե՛վ Երևանում, և՛ շրջաններում փակվեցին ու քանդվեցին մեծ թվով եկեղեցիներ[4]: Մայր Աթոռում միայն մի քանի ծեր հոգևորականներ էին մնացել, որոնց մահից հետո եկեղեցին ինքնըստինքյան կփակվեր:

Անրադառնանք պետության կողմից իրականացվող հարկային քաղաքականության մի դրվագի. «Էջմիածնի վանքի միաբանութեան 8 անդամները սոյն մայիսի վերջերին ստացել են անուանական ծանուցագրեր, 1938 թվի եկամտային հարկի և կուլտ. տուրքի վճարման քանակն ու ժամկետը նշող:

«Էջմիածնի Գերագոյն հոգեւոր խորհուրդը այսու պարտք է համարում յայտնել.

Ա. որ այս միաբանութիւնը ստացել է անցեալ տարուան չափով ռոճիկ, իսկ ալիւր, միայն հունուար-ապրիլ չորս ամիսներին, որի տուչութիւնը դադարեցրած է:

Բ. Էջմիածնի միաբանութեան անդամները՝ տարիքաւոր եւ աշխատանքի անընդունակ լինելով՝ գտնուում են վանքի խնամակալութեան ներքոյ, ստանալով ամսական միայն սննդադրամ նշամակուած չափով (այն է՝ 250-220-200 ռուբլի):

Գ. Էջմիածնի միաբանության ութ անդամները, բացի մէկից, վաթսունն անց են, 70 եւ աւելի տարիք ունեն:

Գերագույն հոգեւոր խորհուրդը նկատի առնելով վերոյիշեալ հանգամանքները, այսու խնդրում է հանդէպ միաբանութեան անդամների կրճատել հարկի չափը: Դիմումին կցուած է միաբանության անդամների ծննդեան տարին, տուրքը և նրանց ստացած ամսական ռոճիկի քանակը:

Ցուցակ 8 միաբանների

---

[1] Տե՛ս Ստեփան Ստեփանյանց, Հայ առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, էջ 22-23:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 23:
[3] Տե՛ս Revue du monde Armenien, moderne et contemporain, tome 2, Pariz, 1995-1996, p. 135-162.
[4] Տե՛ս Ստեփան Ստեփանյանց, Հայ առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, էջ 80-81:

ծնունդ տարիք ամսական ռոճիկ
Մեսրոպ արքեպիսկոպոս Տէր-Մովսիսեան 1865-ին 73 տարեկան 250ռ.
Գեվորգ արքեպիսկոպոս Չորեքչեան 1868 70 250ռ.
Արիստակէս եպիսկոպոս Զուլոյեան 1869 69 220
Վրթանէս եպիսկոպոս Յակոբեան 1876 62 220
Սարգիս եպիսկոպոս Շիրոյեան 1866 72 220
Արսէն արքեպիսկոպոս Ղլտճեան 1868 70 250
Եղիշէ վարդապետ Շահումեան 1877 61 200
Մատթէոս վարդապետ Աջեմեան 1879 58 200

Տեղակալ Ամենայն Հայոց Հայրապետի
ԳԵՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ»[1]:

Եթե մինչև խորհրդային կարգերի հաստատումը Հայ առաքելական եկեղեցու հոգևոր գործառույթներն ընդգրկում էին նաև հասարակական-քաղաքական, ազգապահպան և այլ ոլորտները, խորհրդային կարգերի հաստատումից հետո եկեղեցու գործառույթը փոխվեց. այն հիմնականում զբաղվում էր ծիսակատարությունների կատարմամբ: Այդ ընթացքում եկեղեցին պետության նկատմամբ վարում էր չեզոք քաղաքականություն: Իրականում Խորհրդային Միության և Հայ առաքելական եկեղեցու հարաբերությունները իրենց բնույթով հակասական էին, նախ տարվում էր հալածանքի հստակ քաղաքականություն, բայց միևնույն ժամանակ ըստ քաղաքական, տնտեսական և այլ շահերի այդ հարաբերությունները երբեմն ունենում էին գործընկերային բնույթ: Այդպիսին էին հարաբերությունները հատկապես Հայրենական պատերազմի տարիներին, երբ եկեղեցու դերը փոքր-ինչ կարևորվեց: Հետագայում էլ եկեղեցու գործուն մասնակցության շնորհիվ 1946 թ. ակտիվացավ հայրենադարձության գործընթացը[2]:

Ակնհայտ էր եկեղեցու նկատմամբ վարած քաղաքականության մեղմացումը Հայրենական պատերազմի տարիներին: Նախևառաջ դա պայմանավորված էր ցեղասպանությունից հետո ամբողջ աշխարհով սփռված հայ գաղթօջախներով ու նրանց վրա եկեղեցու ունեցած ազդեցությամբ, քանի որ գաղտնիք չէ, որ Հայ առաքելական եկեղեցին նաև համահայկական կառույց է ու համախմբում է աշխարհասփյուռ հայությանը: Երկրորդ համաշխարհային պատերազմում Խորհրդային Միության հաղթանակի գործում փաստացի իր մեծ ներդրումը ունեցավ նաև հայ ժողովուրդը՝ իր եկեղեցիով: Դրա վառ վկայությունն է Գևորգ արք. Չորեքչյանի նամակը տանկաշինության ժողկոմին՝ «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան համար ժողոված դրամագլխի վերաբերյալ.

«Տանկաշինության ժողովրդական կոմիսարին,

Գերագույն խորհրդի որոշման համաձայն Էջմիածնում Հայոց կաթողիկոսի տեղապահին առընթեր սկսվել և շարունակվում է սփյուռքահայերի և տեղի հայության շրջանում միջոցների հավաքումը՝ Սասունցի Դավթի անվան տանկային շարասյան ստեղծման համար:

---

[1] Սանդրո Բեհբուդյան, «Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1938-1955թթ)», Գիրք Զ, Գեորգ Զ Չորեքչեան, Կաթողիկոս Ամենայն Հայոց, «Ոսկան Երևանցի» հրատ., Երևան, 1999, էջ 11-12:
[2] ՀԱԱ, Ֆ 113, ց. 3, գ. 1809, թ. 3:

ԽՍՀՄ պետբանկի երևանյան բաժանմունքում, մեր N (տեղ է թողնված) ընթացիկ հաշվին առկա են հետևյալ թանկարժեք իրերն ու դրամական միջոցները՝ հիշյալ նպատակին ծառայեցնելու համար.

1. Ոսկյա մեկ պնակ, զարդարուն ադամանդներով և երկու ադամանդակուռ խաչ՝ 800.000 ռուբլի ընդհանուր արժողությամբ,
2. Հազար (1.000) անգլիական ֆունտ ստերլինգ,
3. Քառասուն հազար (40.000) դոլար,
4. Հարյուր քսան հազար (120.000) ռեալ,
5. Յոթանասունհինգ հազար (75.000) խորհրդային ռուբլի:

Հայտնելով սույնի մասին, խնդրում եմ ԽՍՀՄ պետբանկի երևանյան մասնաճուղից ստանալ նշված իրերն ու գումարները և ներդնել Սասունցի Դավթի անվան տանկային շարասյան պատրաստման գործում:

Սասունցի Դավիթ տանկային շարասյան պատրաստումն ավարտելուց հետո զորամասին հանձնելու ժամանակ, կխնդրեի չմերժել և ինձ տեղյակ պահել այդ մասին:

Ամենայն Հայոց Հայրապետական Ազգընտիր տեղապահ
Գևորգ Արքեպիսկոպոս Չորեքչյան»[1]:

Այս և նմանատիպ այլ ձեռնարկումների շնորհիվ խորհրդային իշխանության և եկեղեցու հարաբերություններում նկատվեց որոշակի բարելավում, բայց պետության կողմից բոլոր հնարավոր միջոցներով վերահսկվում էր եկեղեցին:

Պատերազմի տարիներին Մայր Աթոռի իրական վիճակի մասին առավել ամբողջական պատկերացում կարող է տալ հետևյալ մեջբերումը.

«Հայկական ԽՍՀ պետական անվտանգության ժողովրդական կոմիսար Գրիգոր Հովսեփի Մարտիրոսյանին.

Նկատի ունենալով, որ Էջմիածինն անկարող է ապրանքային բարձր արժեքով գնված սննդամթերքով ապահովել միաբանության անդամներին, խնդրում եմ Ձեր հրահանգը. խմբերին համապատասխան քարտեր և կտրոններ հատկացնելու վերաբերյալ ըստ Ձեր հայեցողության:

Էջմիածնի միաբանությունն այժմ կազմված է.

1. Համաժողովրդական ընտրությամբ Ամենայն Հայոց Պատրիարք-Կաթողիկոսի տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյան,
2. Էջմիածնի հոգևոր խորհրդի անդամ՝ Արսեն արքեպիսկոպոս Ղլտճյան,
3. Երկու վանականից՝ Էջմիածնի միաբանից և (տեղ է թողնված),
4. Երկու սաղմոսերգու հոգևորականից, որ չնայած միաբանության անդամ չեն, այնուամենայնիվ անփոխարինելի են իրենց պաշտոնի կատարմամբ,

Հիշյալ անձանցից բացի Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհրդի անդամ են նաև երկու աշխարհիկ մարդ. մեկը՝ բժիշկ. որ բնակվում է Երևանում, մյուսն իրավաբան՝ Կիսլովոդսկի բնակիչ:

Վերջին երկուսին հացով, շաքարով և սննդամթերքով ապահովելու հարցը խնդրում եմ լուծել ըստ Ձեր հայեցողության:

---

[1] Սանդրո Բեհբուդյան, «Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1938-1955 թթ)», Գիրք Ձ, Գեորգ Ձ Չորեքչեան, Կաթողիկոս Ամենայն Հայոց, «Ոսկան Երևանցի» հրատ., Երևան, 1999, էջ 188-189:

Սրանից բացի խնդրում եմ ի նկատի ունենալ Էջմիածնի միաբանություն ժամանող (տեղ է թողնված) անդամներին»[1]:

Հայրենական պատերազմի տարիներին եկեղեցին կիսում էր բոլոր այն ծանրությունները, որոնք առկա էին ժողովրդի առջև, բայց միևնույն ժամանակ իր մեծ ներդրումն էր ունենում նյութական և բարոյական առումով այդ հաղթանակի կերտման գործում: Դրա վառ ապացույցն է հայ ժողովրդին ուղղված Հայոց եկեղեցու կոչը.

«Սուրբ Էջմիածնի Ծայրագույն Հոգևոր իշխանությունը անկարող է անտարբեր՝ ականատես հանդիսանալ. նա ի դեմս Հայ եկեղեցու ու հայ ժողովրդի՝ բողոքում է կատարուած այս անարդարութեան դեմ: Բայց եւ հոգով ուրախ է մխիթարված, որ այս պատմական վայրկյանին իր հոգևոր զավակներն էլ մյուս ժողովուրդների հետ ոգևորությամբ և ազնվությամբ կատարում են իրենց ժողովրդական, քաղաքացիական ու պետական պարտականությունները:

Հայ եկեղեցին յորդոր է կարդում նաև արտասահմանի հայութեանը՝ ըստ ամենայնի օժանդակել Հայրենիքի մեծ եւ արդար գործին, նպաստելով նորա յաջող լուծման:

Հայ եկեղեցին դիմում է նաև միւս քրիստոնեայ եկեղեցիներին ու ոչ քրիստոնեա կրոնապետերին բողոքի ձայն բարձրացնել այս անլուր անարդարութեան դեմ: Ամոթ եւ նախատիք նրանց, որոնք կը դավաճանեն մեր մեծ Հայրենիքի շահերին, որոնք՝ յուդայ Վասակի նման դավաճանելով իր հայրենիքին, իր եկեղեցուն՝ կը ծառայեն թշնամուն: Հայ ժողովուրդը այդպիսիներին դատապարտութեան ոխնին կը գամէ, ինչպես պատմությունը վարվել է դավաճան Վասակի հետ:

Ի վերջո աղոթում ենք մեր քաջամարտիկ զորքի հաջողութեան եւ հաղթութեան համար: Սովետական միության ժողովուրդների բարոյական միավորությիւնը եւ միւս բոլոր ազգերի համակրութիւնը գրավական է մեր վերջնական յաղթութեան:

Մաղթում ենք փրկել մեզ թշնամուց: Հավատում ենք մեր երկրի զորութեանը եւ երկրի անսասանութեան յուրախութիւն Սովետական Միութեան ժողովուրդների եւ ամբողջ քաղաքակիրթ մարդկութեան:

Առաջադրում ենք բոլոր թեմական իշխանութեանց ամենուրեք Հայ եկեղեցիներում տնօրինել ու Պատարագ մատուցանել. յետ պատարագի մաղթանք կատարել քաջամարտիկ Կարմիր բանակի յաղթութեան համար եւ գրությանս իմաստով յորդորական խոսք արտասանել»[2]:

Հատկանշական է նաև եկեղեցու օժանդակությունը տարբեր բնագավառներում, այդ թվում մշակութային, ինչպիսին օրինակ Գևորգ Ձ կաթողիկոսի նամակն է Տիրան եպիսկոպոսին՝ հայ կինոյի զարգացմանը նպաստելու համար Ամերիկայից նորագույն գործիքներ ուղարկելու վերաբերյալ[3]:

«Առաջին անգամն է, որ Ազգային-Եկեղեցական ժողովը՝ իր բոլոր մոմենտներով Հայ Կինոյի նիւթ է դարձել, եւ կինոն արդէն գործում է արտասահմանում: Ամիսներ առաջ Երևանում կինոյի յատուկ երեկոյթ էին կազմակերպել սահմանափակ թւով

[1] Սանդրո Բեհբուդյան, «Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (938-1955թթ)», Գիրք Ձ, Գէորգ Ձ Չորեքչեան, Կաթողիկոս Ամենայն Հայոց, «Ոսկան Երևանցի» հրատ., Երևան, 1999, էջ 188:
[2] ՀՀ ՊԿՊԱ, Ֆ 409. ց 1, գ 270 թ. 1:
[3] Ս. Էջմիածին (12 մարտի, 1946 թ.):

անձանց համար, որոնց թւում նաև ինձ էին հրաւիրել: Այստեղ ես տեսայ Հայ Կինոյի յետամնացութիւնը, համեմատելով Միութեան միւս Հանրապետութիւների հետ եւ խորհեցի ցաւին դարման տանել:

Կինոն ժողովրդի կուլտուրական զարգացման գործօններից մէկն է. «Հայերս պարծենում ենք մեր կուլտուրականութեամբ. ապա ուրեմն պարտականութիւն ունինք նաև այդ ուղղութեամբ մեր թերություններն ուղղելու, մեր պակասը լրացնելու: Տեխնիկան եւ հարստութիւնը այսօր կենտրոնացած է Ամերիկայի մէջ, բնականաբար ուրեմն Հայ Կինոյի կատարելագործման պարտականութիւնը ծանրանում է Ամերիկահայութեան վերայ եւ Մենք վստահ ենք թէ ամերիկահայութեան մեջ գտնուին այդ գործին սիրով ընդհառաջողներ...»[1] :

Բերված օրինակներում հստակ երևում է եկեղեցու մոտեցումը երկրին, պետությանը, ժողովրդին և նրա առջև ծառացած հարցերին ու հոգսերին: Չնայած կրած իր զրկանքներին՝ եկեղեցին շարունակում էր ունենալ իր մեծագույն դերը հայ ժողովրդի կյանքում:

Պետություն-եկեղեցի համագործակցության լավ օրինակ էր նաև հայրենադարձությունը, որ նախաձեռնել էր Խորհրդային Միությունը և որին իր գործուն մասնակցություն էր բերել Հայ առաքելական եկեղեցին: Ամբողջ աշխարհում աշխարհասփյուռ հայությանը եկեղեցին կոչ էր անում վերադառնալ մայր հայրենիք և լծվել այն շենացնելու գործին: Եկեղեցին բացի կոչերից, նաև նյութական օժանդակություն էր ապահովում, հայրենադարձությունը կազմակերպելու համար: Այդ օրինակ կոչերից է Ամերիկայի թեմի առաջնորդ Տիրան եպիսկոպոս Ներսեսյանի կոչը հայրենադարձության մասին 1947 թ. փետրվարի 15. «Ամերիկայի Հայությունը անցյալ տարի ի Հայրենիս վերադարձի սրբազան գործին օժանդակելու նպատակով հաջողությամբ պսակեց մեկ միլիոն դոլարի հանգանակությունը, որուն ձեռնարկեց Հ.Բ.Ը. Միությունը և որուն ձեռնատու եղան մեր եկեղեցական մարմինները և ուրիշ ամեն հայրենասիրական կազմակերպություններ»[2]:

Այս և նմանատիպ այլ ձեռնարկումները դարձան կարևոր շարժառիթ, որի արդյունքում խորհրդային իշխանությունները ի վերջո փոխեցին իրենց վերաբերմունքը Հայոց եկեղեցու նկատմամբ և հետագա զարգացման համար ավելի նպաստավոր պայմաններ ստեղծեցին: Նախ թույլատրվեց կազմակերպել կաթողիկոսական ընտրություններ, Էջմիածնին վերադարձվեցին մի քանի եկեղեցիներ, այլ շինություններ, այդ թվում նաև Գևորգյան հոգևոր ճեմարանի շենքը, որը հնարավորություն տվեց երկարամյա դադարից հետո վերաբացել նաև եկեղեցական այս կրթօջախը:

Խորհրդային իշխանությունների հետ առավել գործուն և արդյունավետ հարաբերություններ ձևավորվեցին Վազգեն Ա Կաթողիկոսի հայրապետության տարիներին, որոնք որոշակի վայրիվերումներով շարունակվեցին մինչև Խորհրդային Միության փլուզումը: Այդ ընթացքում Հայոց եկեղեցին սկսեց զարթոնք ապրել, մեծացավ հոգևորականության թիվը, վերանորոգվեցին բազում եկեղեցիներ ու վանքեր:

---

[1] ՀՀ ՊԿՊԱ, Ֆ 409. ց 1, 3604, թ. 5, բնագիր, մեքենագիր:

[2] Արտավազդ արքպս., Ներգաղթը և թեմական առաջնորդները, Էջմիածին, N 11-12, էջ 30-32, 1947:

Геворг Мкртчян, Церковно-государственные отношения в Советской Армении, - После установления советской власти начался новый исторический период в государственно-церковных отношениях. Это довольно интересно с точки зрения развития связей между Советской Армении и Армянской Апостольской Церкви из-за отношении советской власти к Церкви, которое имело постепенное развитие с некоторыми изменениями и модуляциями. В исследовании в основном отражается начальный период отношений между Советской Армении и Армянской Апостольской Церкви, потому что Законодательство и нормативные акты были приняты в основном в этот период и не подлежали дальнейшим изменениям.

Gevorg Mkrtchyan, Church-State Relations in the Armenian SSR, - After the establishment of the Soviet regime a new historical period began for state-church relations. This is quite interesting in terms of the development of the relations between the Armenian SSR and the Armenian Apostolic Church in the study because of the attitude of the Soviet authorities towards the Church which had a gradual development with some changes and modulations. The early period of the relations between the Armenian SSR and the Armenian Apostolic Church is mainly reflected in this study, because the legislation and the regulations were adopted in this period and never prosecuted for further changes.

Գևորգ Մկրտչյան – ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի կրոնի պատմության և տեսության ամբիոնի հայցորդ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի երիտասարդաց բաժնի (ՀԵԵՄ) տնօրեն: